



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաղաք Արարատ, Հայաստանի Հանրապետություն

Երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի ութին

Մենք՝ **ՄԱՆՈՒՇԱԿ ՍՈՂՈՍՈՒՄՅԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ**, ծնված՝ 08/02/1954թ-ին, ՀԾՀ՝ 5802540322, անձնագիր՝ 000964841, տրված՝ 026-ի կողմից, 11/02/2013թ-ին, բնակության հասցե՝ ԱՐԱՐԱՏ, ԱՐԱՐԱՏ, Գ.ԱՐԱՐԱՏ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ Փ., 6 S հասցեում, այսուհետ <<ՎԱՐՁԱՏՈՒ>> մի կողմից և **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ** ի դեմս «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԺԻՆ, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ Փ. / 3/8, գրանցման համար՝ 286.184.1045366, ՀՎՀՀ՝ 02506264, ի դեմս **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԶԱՐՏՈՒՂԱՐ ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**, որը գործում է Նախախարության կանոնադրության հիման վրա, որի անունից թիվ՝ 242 լիազորագրով, տրված՝ 02/12/2021թվականին, հանդես է գալիս **ԱՐԱ ՎՐԵԺԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ**, ծնված՝ 30/04/1976թ-ին, ՀԾՀ՝ 4004760100, Նույնականացման քարտ՝ 005654066, տրված՝ 027-ի կողմից, 09/10/2017թ-ին, հաշվառված՝ ԱՐԱՐԱՏ, ԱՐՏԱՇԱՏ, ԱՅԳԵՍՏԱՆ, Պ. ՍԵՎԱԿԻ Փ., 16 S հասցեում, այսուհետ <<ՎԱՐՁԱԿԱԼ>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱԼ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված գույքը, իսկ Վարձակալը պարտավորվում է դրա դիմաց վճարել վարձավճար սույն պայմանագրի 3 կետով նշված չափով և ժամկետում:

1.2 Վարձակալության հանձնվող գույքը իրենից ներկայացնում է 494.9/չորս հարյուր ինսունչորս ամբողջ ինը տասնորդական/քառակուսի մետր հասարակական նշանակության շինություն և 0.038/գերո ամբողջ երեսունութ հազարերորդական/ հեկտար բնակավայրերի նշանակության հողամաս որոնք գտնվում են ՀՀ, Արարատի մարզ, համայնք Արարատ գ. Ռ. Վարդանյան փողոց, 21/1/քսանմեկ կոտորակ մեկ/ հասցեում, այսուհետ <<Գույք>>:

1.3 <<Գույք>> պատկանում է Վարձատունին սեփականության իրավունքով, որը հավաստվում է թիվ՝ 06122017-03-0038 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով, տրված՝ 06/12/2017թ. ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

1.4 Վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է գրավի իրավունքով <<ՀԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ>>ԲԲԸ-ի կողմից: Առկա է բանկի համաձայնությունը գրավադրված գույքը առանց գրավադրման արգելադրումից հանելու վարձակալության հանձնելու պայմանով, որ պայմանագրում ներառվի հետևյալ կետը.

„Վարձակալը և վարձատուն պարտավորվում են գրավով ապահովված վարկային պարտավորությունների չկատարման դեպքում Գրավառուի պահանջով կամ առանց դատարանի գրավի իրացման դեպքում Նոր սեփականատիրոջ պահանջով 30/երեսուն/ օրվա ընթացքում ազատել վերոնշյալ տարածքը/ անշարժ գույքը/ և լուծել վարձակալության պահմանագիրը:

Վարձակալության հանձնվող գույքը ազատ է այլ անձանց իրավունքներից, որը հավաստվում է ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրված թիվ՝ N ՄՏ-08122021-03-0020 տեղեկանքով, որի տվյալները լրացված են 08/12/2021թվականի դրությամբ:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականում գրառված ծածկագրերը համապատասխանեցված են գույքի նկատմամբ իրավունքների պետական միասնական էլեկտրոնային մատյանում լրացված տվյալներին: ՀՀ Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների համաձայն, օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կկատարվի հաշվառող մարմինների կողմից տրված անշարժ գույքի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատարանի ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից:

2.4 ՈՐՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն պարտավոր է՝

2.1.1. Վարձակալին հանձնել 1.1 կետում նշված գույքի պատկանելիքները,

2.2. Վարձակալը պարտավոր է՝

2.2.1 գույքը օգտագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան նպատակային նշանակությամբ,

2.2.2 պահպանել գույքը այլ անձանց ոտնձգություններից:

2.2.3 պարտավոր է վճարել իր կողմից օգտագործած կոմունալ ծառայությունների դիմաց:

